ՎԵՐՋԻՆ ՄԻԱՎԱՆԿ ԲԱՂԱԴՐԻՉՈՎ ԲԱՐԴ ԲԱՌԵՐԻ ՀՈԳՆԱԿԻ ԹՎԻ ԶՈՒԳԱՁԵՎԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

ԱՄԱՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ժամանակակից գրական արևելահայերենի լեզվական կառուցվածքի գրեթե բոլոր մակարդակներում առկա են որոշ իրողությունների զուգաձև կիրառություններ, կրկնակ ձևեր, որոնց քննությունը կարևոր է գրական լեզվի նորմավորման ընթացքը դիտարկելու, նոր ձևավորվող օրինաչափությունները ի հայտ բերելու և ընդհանրապես լեզվի զարգացման միտումները բացահայտելու տեսակետից։

Զուգաձևերը բառային կամ քերականական այն ձևերն են, որոնք իմաստով նույնն են, ձևով՝ տարբեր[1]։ Մեր նպատակն է ներկայացնել ժամանակակից հայերենի վերջին միավանկ բաղադրիչով բարդ բառերի հոգնակի թվի կազմության տարբերակները և պարզել հոգնակիի զուգաձևության առաջացման պատճառները։ Տվյալ դեպքում խոսքը վերաբերում է –եր և –ներ հոգնակերտ մասնիկների՝ ժամանակակից հայերենի գոյականի թվի քերականական կարգի ամենատարածված ու ամենակենսունակ ձևական ցուցիչների, կիրառության որոշ առանձնահատկություններին։

Հայերենի քերականական կառուցվածքին նվիրված աշխատություններում հոգնակի թվի կազմության քննության կապակցությամբ արվել են առանձին դիտողություններ զուգաձև հոգնակիների առկայության և դրանց առաջացման այլևայլ պատճառների մասին[2]։

Հ. Պետրոսյանը ի մի բերելով նշված հարցի մասին արտահայտված կարծիքները՝ զուգաձև հոգնակիների առկայությունը բացատրում է «մասամբ սովորույթի ուժով, տվյալ կառուցաձևը ավանդաբար գործածելով, մասամբ արևմտահայերենի ազդեցությամբ և կամ պարզապես գրական լեզվի նորմայի ոչ հստակ գիտակցումով»[3]։

Ժամանակակից հայերենում, որպես կանոն, –եր մասնիկ ստանում են գոյական բաղադրիչով կազմությունները, իսկ –ներ՝ այն բարդությունները, որտեղ վերջին միավանկ բաղադրիչը բայարմատ է կամ բայիմաստ ստացած գոյական[4]։ Սակայն այս կանոնը հստակ չի գործել ժամանակակից հայերենի

---

1 «Լեզվաբանական բառարան», Երևան, 1975, էջ 100։

2 Հ. Աճառյան, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 3, Երևան, 1957, էջ 818—819, Ս. Արրահամյան, Ժամանակակից հայերենի քերականություն, Երևան, 1969, էջ 46—47, Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Ա, Երևան, 1970, էջ 125—128, «Հայոց լեզվի զարգացումը սովետական շրջանում», Երևան, 1973, էջ 333—336, Հ. Պետրոսյան, Գոյականի թվի կարգը հայերենում, Երևան, 1972, էջ 296—312։

3 Հ. Պետրոսյան, նշվ. աշխ., էջ 302։

4 Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 337, Գ. Սևակ, Ժամանակակից հայոց լեզվի դասընթաց, Երևան, 1955, էջ 277, Դ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 46, Է. Աղայան, Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967, էջ 250։

զարգացման նախորդ ենթաշրջանում՝ XIX դ. կեսերից մինչև XX դ. առաջին տասնամյակներն ընկած ժամանակահատվածում։ Այդ շրջանի հեղինակների ստեղծագործություններում հաճախ հանդիպում ենք նույն բառի հոդնակիի զուգաձև կիրառությունների. հմմտ.՝ օրագիրներ (ՄՆ, էջ 380) և օրագրեր (ՄՆ, էջ 228), հեռագիրներ և հեռագրեր (ՆԴ, 2, էջ 120), դրամատերներ (Ր, 2, էջ 246) և գրամատերեր (Ր, 3, էջ 205) և այլն[5]։ Ժամանակակից հայերենի արդի փուլում կանոնականը այդ բառերի միայն –եր-ով հոգնակիներն են։

Կան միավանկ գոյական վերջաբաղադրիչներով մի շարք բարդ գոյականներ, որոնց հոգնակին այժմ էլ կազմվում է միայն –ներ մասնիկով. դրանցից են՝

–անցք[6] միջանցքներ, լուսանցքներ, ջրանցքներ, նրբանցքներ.

–բան՝ նշանաբաններ, բնաբաններ, առաջաբաններ, վերջաբաններ, նախաբաններ.

–դուլ՝ գործադուլներ, հացադուլներ, դասադուլներ.

–զոր՝ կայազորներ, հեծելազորներ, լիազորներ.

-կիր՝ ձկնկիրներ, հավկիրներ, կովկիրներ.

–պան՝ խանութպաններ, դռնապաններ, այգեպաններ, պարտիզպաններ.

–պետ՝ խմբապետներ, ախոռապետներ, գյուղապետներ, դպրապետներ, ճարտարապետներ, գնդապետներ և այլն։

Կան նաև միավանկ գոյական բաղադրիչով հոգնակիի –ներ կազմություն ունեցող՝ բառաշարքեր չկազմող, առանձին բառեր՝ վերելքներ, հրազեններ, վայրէջքներ, ծիախոտներ (գլանակ), վզկապներ, փոդկապներ, ժամկետներ, տեսակետներ, խոտհարքներ, հատկանիշներ, չափանիշներ, միջնորմներ, ընծուղտներ և այլն։ Սրանք հիմնականում իմաստափոխված բաղադրիչներով բառեր են կամ ունեն այնպիսի վերջաբաղադրիչներ, որոնք առանձին չեն կիրառվում։ Սակայն նման կազմությունների թիվը ժամանակակից հայերենում սահմանափակ է։ Կանոնական կազմություն ունի գոյական բաղադրիչով բարդությունների հսկայական մեծամասնությունը։ Հատկապես մեծ թիվ են կազմում հոգնակիում –եր ստացող չիմաստափոխված միավանկ գոյական բաղադրիչով բառերը (անձրևաջրեր, արոտավայրեր, բեռնանավեր, դաշտավայրեր, հողամասեր, մենապարեր, սարալանջեր, վարելահողեր և այլն)։

Զուգաձև հոգնակի[7] կազմող բառերը կարելի է բաժանել մի քանի խմբե-

---

5 Ս. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանում» բերվում են տարբեր գոյական բաղադրիչներով բարդ գոյականների զուգաձև հոգնակիներ. ծրագրեր կամ ծրագիրներ (հ. 2, էջ 356), լրագրեր կամ լրագիրներ (հ. 2, էջ 221), հեռագրեր կամ հեռագիրներ (հ. 3, էջ 93), շոգենավեր կամ շոգենավներ (հ. 3, էջ 529), կրակակետեր կամ կրակակետներ (հ. 2, էջ 501) և այլն։ Կարելի է ենթադրել, որ մինչև XX դ. 40-ական թթ. գոյական բաղադրիչով բարդությունների –եր-ով հոգնակիի կազմությունը դեռևս ընդհանրական կանոն չէր դարձել։

6 –Անցք բաղադրիչով բառերի հոգնակին –ներ-ով կազմելու մասին տե՛ս Ս. Աբրահամյանի դիտողությունը («Ժամանակակից հայոց լեզու», հ. 2, Երևան, 1969, էջ 50)։

7 Բնականաբար, զուգաձև հոգնակիներ չեն համարվում գեղագիրներ և գեղագրեր, արտագիրներ և արտագրեր, ճերքափոխներ և ճերքափոխեր, հուշագիրներ և հուշագրեր և նման այլ կազմությունները, եթե դրանց իմաստային տարբերությունների գիտակցումը պարզորոշ է և, հետևաբար, կիրառությունները ճիշտ են։ Այստեղ փաստորեն տարբեր հոգնակերտների ընտրությունը պայմանավորված է բարդությունների տարբեր իմաստներով (հուշագիրներ՝ հուշեր գրողներ և հուշագրեր՝ հուշագրություններ)։ Մեր քննությունը վերաբերում է այն դեպքերին,

րի. ա) վերջին միավանկ դոյական բաղադրիչով բարդ գոյականներ, բ) գոյական բաղադրիչով փոխանուն ածականներ, գ) վերջին միավանկ բաղադրիչով փոխառյալ բարդություններ, դ) բայարմատ բաղադրիչով բարդություններ։

ա) **Վերջին միավանկ գոյական բաղադրիչով բարդ գոյականներ.—** *Ստորև ներկայացնում ենք առաջին խմբի բարդությունները*[8]*։ Համեմատության համար, հնարավորության դեպքում, բերվում են նույն վերջաբաղադրիչով բառեր, որոնք հոգնակին կազմում են միայն* **-եր** *կամ միայն* **-ներ** *հոգնակերտով։ Աստղանիշերով նշում ենք այն բառերը, որոնց հոգնակիի* **-ներ**-*ով կազմությունները նախկինում գործածական էին, սակայն արդի հայերենի նորմայի տեսակետից հնացած են (Աղյուսակ № 1)։*

Աղյուսակի առաջին կետում խմբավորել ենք ձայնավորով սկսվող բաղադրիչները։ Մեր կարծիքով, այդ բաղադրիչների ձայնավորով սկսվելը որոշակի դեր է կատարել դրանցով բարդված բառերի հոգնակին **-ներ**-*ով կազմելու գործում։ Այդ բառերի երկրորդ բաղադրիչի ձայնավոր հնչյունը վանկ է կազմում առաջին բաղադրիչի վերջին վանկի բաղաձայնի հետ. հմմտ.՝* **գո-վազդ, մա-հազդ, բո-վանցք, հո-րանցք, խըմ-բերգ, գե-րերգ, չը-վերթ** *և այլն։ Այսպիսի վանկաբաժանմամբ երկրորդ բաղադրիչի առանձին գիտակցումն արտասանությամբ չի դրսևորվում, և բարդությունը համարվում է բազմավանկ, մանավանդ որ* **-երգ** *և* **-երթ** *բաղադրիչների* **ե**-*ն արտասանվում է* **է**, *որն է՛լ ավելի է դժվարացնում երկրորդ բաղադրիչի առանձնացումը արտասանությամբ. հմմտ.՝* **պա-րէրգ, դե-րէրգ, ու-ղէրթ** *և այլն։ Հավանաբար, որոշ դեր ունի և վանկաքանակը։ Առաջին կետում խմբավորված զուգաձև հոգնակի ստացող բառերը (բացի* **ավանդերգ**-*ից) երկվանկ են։ Միայն* **-եր** *հոգնակերտ ստացող բառերի վանկաքանակը նույնաբաղադրիչ մյուս բառերից ավելին է։ Աղյուսակի երկրորդ կետում խմբավորված բարդությունների զուգաձև հոգնակիների առկայությունը բացատրվում է տարբեր հանգամանքներով՝ երկրորդ բաղադրիչի իմաստների տարբեր ընկալումներ (առարկայական կամ հատկանշային), բարդության իմաստափոխություն, համաբանություն և այլն։ Առհասարակ նման բարդությունների վանկային կազմի յուրահատկությունը նույնպես որոշ դեր է կատարում։ Այդ նկատի ուներ Հ. Աճառյանը, երբ գրում էր. «Դրվում է* **-եր** *մասնիկը՝ նկատի ունենալով, որ վերջին եզրը միավանկ է, այսինքն առնելով բառը առանձին... Դրվում է* **-ներ** *մասնիկը՝ առնելով բառը իբր մի ամբողջություն և մտածելով, որ բազմավանկը ըստ օրինի պիտի ստանա* **-ներ** *մասնիկը։ ...Ըստ իս տրամաբանությունը պիտի պահանջեր համարել բազմավանկ և դնել* **-ներ»**[9]**:**

-Գիր *բաղադրիչով բարդված բառերից (տե՛ս № 1 աղյուսակը) արդի փուլում հոգնակիի զուգաձև կազմությամբ հանդես է գալիս* **նկարագիր** *բառը։ Օրինակ՝ «Նրա բնության* **նկարագիրները**... *երբեմն գերազանցում են Աբովյանին» (ԱՏ, էջ 149)։ «Կան բժիշկներ, որոնք հիվանդության* **նկարագրերը** *շատ անբարեխիղճ կերպով են կազմում» (Առ., 1, 1961, էջ 16)։ «Կիրառա-*

երբ միևնույն բառի հոգնակին կազմվում է և՛ **-եր**, *և՛* **-ներ** *մասնիկներով՝ չդրսևորելով իմաստային որևէ տարբերություն. հմմտ.* **փոստանիշներ–փոստանիշեր, ստուգայցներ–ստուգայցեր, խմբերգներ–խմբերգեր** *և այլն։*

8 *Ունենք զուգաձև հոգնակի կազմող բառերի բնագրային վկայությունները։*

9 *Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 818—819։*

Աղյուսակ N 1

Գոյականի կազմակերպիչ մասնիկներ		Բառակազմիչներ	Զուգաձև հոգնակի ստացող բառեր	Միայն -եր ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
1	Նախնական դասակարգում	-ազգ	գովազդ, մահազդ		
		-անցք	բովանցք, հորանցք, հերձանցք, քթանցք	հորատանցք, կոճականցք, ականջանցք	լուսանցք, նրբանցք, ջրանցք, միջանցք
		-երգ[10]	խմբերգ, դերերգ, պարերգ, օրհներգ, սիրերգ, վիպերգ, ավանդերգ		
		-երթ	չվերթ, ուղերթ, ողջերթ	վրաերթ, դագաթաերթ	շքերթ
2	Բարդաբանական դասակարգում	-գիր	*ծրագիր, *գրչագիր, *լրագիր, *վերնագիր, *ամսագիր, *ձեռագիր, *հեռագիր, *օրագիր, *բնագիր, նկարագիր	ծրագիր, գրչագիր, լրագիր, վերնագիր, ամսագիր, ձեռագիր, հեռագիր, բնագիր, օրագիր	
		-դարձ	տողադարձ, շրջադարձ, արևադարձ, անկյունադարձ, տարեդարձ, անցուդարձ		
		-կապ	քարկապ, խաչկապ, թևկապ, *թևակապ, կրծկապ, *վիրակապ	հոդակապ, ամրակապ, գուլպայակապ, կողակապ	վզկապ, փողկապ
		-կետ	ստորակետ, միջակետ, վերջակետ, բազմակետ, *կրակակետ, ելակետ	հայեցակետ, գագաթնակետ, հենակետ, նպատակակետ, մեկնակետ, դիտակետ, հանգուցակետ	ժամկետ, տեսակետ
		-նիշ	նամականիշ, փոստանիշ, ուղենիշ, դրոշմանիշ, դրամանիշ, ախտանիշ, խորհրդանիշ, դասանիշ, աստղանիշ		հատկանիշ, չափանիշ, ցուցանիշ
		-պետ	պահեստապետ, դիրասանապետ		խմբապետ, ճարտարապետ, հարյուրապետ, դպրապետ
		-տեր	*բերդատեր, *տանուտեր, *փողատեր	բերդատեր, տանուտեր, դրամատեր, հողատեր. ձեռնարկատեր, գործարանատեր	

10 Բարդության մեջ ե-ն հնչվում է է:

կան արվեստի հուշարձանների երկրորդ խմբին են պատկանում զենքի մասերը, զարդարված **նկարագրերով**» *(ՍԳ, 11, 1964, էջ 152)։ Առաջին երկու օրինակներում պետք է գործածվեր* **նկարագրություն** *բառը, վերջին օրինակում* **նկարագիր** *բառն ունի «նկարված դիր, պատկեր» իմաստը։*

–**Դարձ** *և* –**կապ** *բաղադրիչներով բարդությունների զուգաձև հոգնակիների առկայությունը պայմանավորվում է այդ բաղադրիչների իմաստների երկակի ընկալմամբ (գոյական կամ բայարմատ)։*

–**Ետ** *բաղադրիչով* **տեսակետ** *բառի հոգնակին լինում է* **տեսակետներ**, *իսկ սրան համանիշ* **հայեցակետ** *բառի հոգնակին՝* **հայեցակետեր**: *Հ. Պետրոսյանը դա բացատրում է* **տեսակետ** *և* **ժամկետ** *բառերում* **կետ** *իմաստի մթագնումով և գտնում է, որ* **հայեցակետ** *բառում* **կետ** *իմաստը լիովին չի մթագնված*[11]*։ Մեր կարծիքով,* **կետ** *բառի իմաստը հավասարապես մթագնված է այս երեք բառերում էլ։ Այն մթագնված է նաև հոգնակիում* –**եր** *ստացող* **հանգուցակետ**, **գագաթնակետ**, **հենակետ** *և նման այլ բառերում։ Պատճառն այն է, որ* **հայեցակետ** *բառը, որպես գիտական ոճին հատուկ բառ, ունի գործածության ավելի նեղ ոլորտ, և այդ բառի հոգնակիի կիրառությունը տարածվել է այն ժամանակ, երբ ավելի ընդհանրական է դարձել գոյական վերջաբաղագրիչներով բարդությունների հոգնակին* –**եր**-*ով կազմելու կանոնի գործառությունը։*

–**Նիշ** *բաղադրիչով բառերում զուգաձև հոգնակիների առկայությունը դարձյալ պայմանավորված է* –**նիշ**-*ի իմաստային երկակի մեկնաբանությամբ* (**նիշ**-*ը բերված օրինակների մեծ մասում նշանակում է* **նշան**, *որոշ դեպքերում՝* **նշող**)*: Հավանաբար, որոշ դեր ունի նաև միայն* –**ներ**-*ով հոգնակի կազմող* **չափանիշ**, **հատկանիշ**, **ցուցանիշ** *բառերի հոգնակիների համաբանությունը, ինչպես նաև* –**նիշ** *բաղադրիչով ածականների գոյականական կիրառությունը (քառանիշներ, երկանիշներ, թվանիշներ, դասանիշներ և այլն)։*

–**Պետ** *բաղադրիչով բարդությունները ավանդաբար պահպանում են հոգնակիի* –**ներ** *կազմությունը։ Սակայն նորակազմ*[12] *բառերում նկատվում է հոգնակին* –**եր**-*ով կազմելու միտում. հմմտ.՝* **դերասանապետեր** *(ԲՀ, 3, 1967, էջ 148),* **պահեստապետեր** *(ԾԾ, 31. III. 1964) և այլն։*

Կան միավանկ գոյական վերջաբաղադրիչներով բարդությունների հոգնակիի զուգաձև կազմություն ունեցող բառաշարքեր չկազմող, առանձին բառեր. բերվող բառաշարքում աստղանիշերով նշել ենք այն բառերը, որոնց հոգնակիի –**ներ**-*ով կազմությունները ժամանակակից հայերենի նորմայի տեսակետից հնացած են.* **քարայրեր||ներ**, **ստուգայցեր||ներ**, **ահազանգեր||ներ**, **ձեռագործեր||ներ**, **զառիթափեր||ներ**, **արշալույսեր||ներ**, **զինախաղեր||*զինախաղներ** *(Ր, 7, էջ 73),* **կենդանակերպեր||ներ**, **քարհանքեր||ներ**, **ջրհորեր||ներ**, **ոտնաձայներ||*ոտնաձայններ** *(Ր, 2, էջ 205),* **սանամայրեր||*սանամայրներ** *(ՂԱ, էջ 99),* **շահնշահեր||ներ**, **ցանկապատեր||ներ**, **զառիվայրեր||ներ**, **թևատակեր||ներ**, **հաշվատներ||*կոքատուններ** *(ՄՆ, էջ 276),* **այծուղտեր||ընձուղտներ**, **շրջափակեր||ներ**, **այծքաղեր||ներ**, **խաչքարեր||*խաչքարներ** *(ՊՊ, էջ 131),* **քարաքոսեր||ներ**, **հորաքույրեր||ներ**, **մորաքույրեր||ներ** *և այլն։*

---

11 *Հ. Պ ե տ ր ո ս յ ա ն, նշվ. աշխ., էջ 309։*

12 *Նորակազմ ենք համարում Ս. Մալխասյանցի «Հայերենի բացատրական բառարանում» չվկայված բառերը։*

Արդի գրական արևելահայերենում միավանկ գոյական վերջաբաղադրիչներով բարդ գոյականների հոգնակի թվի զուգաձևերը քանակապես քիչ են, բայց հավաստում են, որ գրանցում դեռևս ավարտին չի հասել հոգնակերտներից որևէ մեկի ընտրության հարցը։ –ներ-ով կազմություններն ավելի հին են կամ գործառում են հիմնականում ժողովրդախոսակցական լեզվում. ներկայումս էլ բանավոր խոսքում հանդիպում են գոյական բաղադրիչով բարդությունների –ներ-ով հոգնակիներ. օրինակ՝ տեղաշորներ, ականջօղներ, տոնածառներ, ճեռագրներ, ճորֆուրներ, մորֆուրներ և այլն, որոնք, սակայն, գրական լեզվում հանձնարարելի չեն։

Հոգնակիի կազմության տեսակետից գոյական վերջաբաղադրիչով բարդ գոյականների նման են նախածանց+միավանկ գոյական կաղապարով գոյականները։ Հ. Աճառյանը գտնում է, որ դրանց (նկատի ունի և նախածանց+միավանկ գոյական կաղապարով ածականները) հոգնակիի կազմությունը տարբերվում է բարդ բառերից. «Բարդ բառերի կարգին չեն պատկանում նրանք, որ կազմված են որևէ նախամասնիկով, ինչ. մակբայ, հգ. մակբայներ, մակդիրներ, նախդիրներ, առողջներ, տարբերներ, ներբողներ, և ոչ բնավ՝ մակբայեր, ինչպես ասում ենք անմիտներ և ոչ բնավ անմիտեր կամ անմտեր»[13]։ Ներկայումս այդ կանոնը լրիվ կիրառելի է նախածանց+միավանկ գոյական կաղապարով ածականներում, իսկ նման կաղապարով գոյականներում այդ կանոնի գործառությունը սահմանափակ է։ Քիչ են նախածանց+միավանկ գոյական կաղապարով այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է միայն –ներ-ով. ճամբրգներ, դեբայներ, մակբայներ, մակդիրներ և այլն։ Սրանք հին կազմություններ են։ Նման կաղապարով գոյականների հոգնակի թվում առկա են որոշ զուգաձևեր. օրինակ՝ ստորակետեր||ներ, բաղածայներ||ներ, վերճուշեր||ներ, ճարացույցեր||ներ և այլն։

Մեծ թիվ են կազմում գրական, գրքային ու գիտական լեզվին հատուկ նշված կաղապարով այն գոյականները, որոնց հոգնակին կազմվում է –եր-ով. օրինակ՝ արտագաղթեր, ճակաթույներ, ճակախաղեր, ենթածայներ, ենթաիմբեր, ենթակետեր, ենթաշերտեր, ճամազարկեր, ճամակարգեր, ներշարեր, շարագծեր, շարակարգեր, պարագծեր, տրամագծեր, տրամաչափեր և այլն։ Մեր կարծիքով, նախածանց+ա հոդակապ+միավանկ գոյական կաղապարով կազմությունների տարածումը նպաստել է նման կաղապարով գոյականների հոգնակիները –եր-ով կազմելուն. ա հոդակապը, եթե մի կողմից ավելի սերտ է դարձնում բարդության բաղադրիչների շարահյուսական կապը, ապա մյուս կողմից, բառի հոգնակին կազմելու տեսակետից ունենում է բարդության բաղադրիչներն առանձնացնող արժեք, քանի որ հոդակապավոր բարդությունների հոգնակին կազմելիս երկրորդ բաղադրիչի գիտակցումն ավելի է ընդգծվում։ Այսպես էլ գոյական+ա հոդակապ+միավանկ գոյական կաղապարով բարդությունների մեծ թվով ստեղծումն ու տարածումը գրական արևելահայերենի նոր շրջանում մեծապես նպաստել է միավանկ գոյական բաղադրիչով բարդ գոյականների հոգնակին –եր-ով կազմելու կանոնի ընդհանրականացմանը։

բ) Գոյական բաղադրիչով փոխանուն ածականներ.— Միավանկ բաղադրիչով (գոյական կամ բայարմատ) փոխանուն ածականների բաղադրիչների շարահյուսական կապը տարբերվում է նմանատիպ բարդ գոյականների

---

13 Հ. Աճառյան, նշվ. աշխ., էջ 819։

բաղադրիչների կապից։ Եթե վերջիններիս շարահյուսական կապը հիմնականում ենթադրում է սեռի և տեսակի հարաբերություն[14], ապա միավանկ բաղադրիչով փոխանուն ածականների բաղադրիչների փոխհարաբերություններում առկա է նաև այն գոյականի առարկայական իմաստը, որի քերականական հատկանիշների կրողն է դառնում փոխանուն ածականը. այսպես՝ շարագործներ՝ շարադործ մարդիկ, կակղամորթներ՝ կակղամորթ կենդանիներ և այլն։

Շատ փոխանուն ածականներ գոյականաբար հաճախակի կիրառվելով՝ վերածվում են գոյականների։ Դրանց հոգնակին կազմվում է միավանկ գոյական բաղադրիչով բարդ գոյականների հոգնակիների նմանողությամբ՝ -եր-ով։ Այսպես՝ փոքրատառեր, մեծատառեր, նորատունկեր, գուգաձեռանիստեր, բազմանիստեր, ծածկասերմեր, մերկասերմեր, ճյուսիսապիյլեր, տնամերձեր և այլն։ Օրինակ՝ «Սակայն որոշ տնտեսություններ (մեծ մասամբ մասնավոր տնամերձերում) ինչ-ինչ ճանապարհներով այն ձեռք են բերում...» (Գ, 2, 1978, էջ 38)։ «Հյուսիսապիյլերի բնույթը ուսումնասիրելու հետաքրքիր փորձ է կատարվել» (ԳՏ, 12, 1971, էջ 62)։ «Դիտողին տանում են... մեր օրերի աշխատավորի ձեռքով վեր խոյացող տուֆակերտ բազմահարկերի ոլորանները» (Գ, 3, 1978, էջ 87)։

Սակայն կան գոյական բաղադրիչով փոխանուն ածականներ, որոնք դեռևս չեն վերածվել գոյականների և սպասելի -ներ-ի փոխարեն հոգնակին կազմում են -եր-ով։ Այսպես՝ բավական տարածված են -ձև, -կերպ, -թև և այլն գոյական բաղադրիչներով փոխանուն ածականների -եր-ով հոգնակիները[15]։ Օրինակ՝ «Գնդաձև բակտերիաների տրամագիծը 1—2 մկմ է, ձողաձևերի լայնությունը տատանվում է 0,4—0,8 մկմ» (ՀՍՀ, 2, էջ 243), ցուպիկաձևեր (ՀՍՀ, 2, էջ 243), ստորակետաձևեր (ՀՍՀ, 2, էջ 242), «խեցգետնակերպերը ջրային կենդանիներ են» (Կենդ., էջ 66)։ «Սարդակերպերը լինում են տարբեր մեծության» (Կենդ., էջ 74)։ «Կարծրաթևերի կարգին են պատկանում... այն միջատները, որոնք ունեն առջևի կարծր թևեր...» (Կենդ., էջ 96)։ «Ուղղաթևերի բերանի օրգանները կրծող են» (Կենդ., էջ 89—90) և այլն։ Ընդգծված բառերի հոգնակիների՝ այլ բառարաններում վկայված օրինակները -ներ-ով են. հմմտ.՝ խեցգետնակերպներ, (ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 514), կենդանակերպներ (ԺՀԼԲԲ, հ. 3, էջ 102), սարդակերպներ (ԷԱ, ԱՀԲԲ, հ. 2, էջ 1284), ուղղաթևներ (ԷԱ, ԱՀԲԲ, հ. 2, էջ 1942) և այլն։ Հանդիպում են նաև նույն վերջաբաղադրիչով բառերի զուգաձև հոգնակիներ նույն աղբյուրում. հմմտ.՝ խեցգետնակերպեր (ՀՍՀ, 1, էջ 343), ձկնակերպերի դաս (ՀՍՀ, 1, էջ 419), բայց՝ սագակերպների կարգ (ՀՍՀ, 1, էջ 342)։

գ) Վերջին միավանկ բաղադրիչով փոխառյալ բարդություններ.— Ընդունված է ասել, որ երբ բարդության միավանկ փոխառյալ բաղադրիչը հայերենում չի գիտակցվում ու անկախաբար չի գործածվում, ամբողջ բարդության հոգնակին կազմվում է -ներ-ով. օրինակ՝ սպիրոխետներ (ՀՍՀ, 2, էջ 243), լուսաֆորներ, ֆոտոֆորներ (Բուս., էջ 202)։ Իսկ երբ այդ բաղադրիչը գիտակցվում ու անկախաբար գործածվում է, բարդության

---

14 Գ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի հոլովման համակարգը, Երևան, 1967, էջ 46—47։

15 Նման բարդությունների հոգնակիներն այժմ ունեն տերմինային արժեք, հավանորեն այդ պատճառով էլ դիտվում են որպես գոյականներ։

հոգնակին կազմվում է -եր-ով. միկրոֆիլմեր, մուլտֆիլմեր, բլոկպոստեր (ԳՏ, 3, 1978, էջ 30), ներկապուլտեր (ԳՏ, 3, 1978, էջ 26) և այլն։

Սակայն վերջին շրջանում նկատվում են հոգնակի թվի զուգահեռ ձևեր նաև միավանկ բաղադրիչով փոխառյալ բառերում։ Պատճառն այն է, որ գիտության տարբեր բնագավառներում հաճախակի գործածվող փոխառյալ բարդությունների նախկինում չգիտակցվող երկրորդ բաղադրիչները ներկայումս գիտակցվում կամ գործածվում են իբրև անկախ բառեր։ Որպես միավանկ բառեր դրանց հոգնակին կազմվում է -եր-ով. օրինակ՝ ֆագեր (ՀՍՀ, 2, էջ 244), կոկեր (ՀՍՀ, 2, էջ 243)։ -եր-ով հոգնակին պահպանվում է նաև դրանցով կազմված բարդություններում։ Ստորև ներկայացնում ենք զուգաձև հոգնակի ստացող փոխառյալ բարդությունների բառաշարը. համեմատության համար ներկայացնում ենք նաև այնպիսի բաղադրիչներ, որոնցով բարդված բառերի հոգնակին կազմվում է միայն -ներ մասնիկով։

Աղյուսակ № 2

Բաղադրիչը	Զուգաձև հոգնակի ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
-բոտ	մոտորոտ	
-գոկ	գիպլոգոկ	
-կոկ	ստաֆիլակոկ, ստրեպտոկոկ, պնևմոկոկ, պլևրակոկ, դիպլոկոկ	
-ֆագ	բակտերիաֆագ, զոոսոլիֆագ, մոնոֆագ, պոլիֆագ, ֆիտոպոլիֆագ	
-զավր	գինոզավր, ըրախիոզավր, գիգանտոզավր, իխտիոզավր	
-ֆիտ		սապրոֆիտ, պսիլոֆիտ
-ֆիլ		տալոֆիլ, պսիխրոֆիլ
-ցիտ		լեյկոցիտ, էրիտրոցիտ, թրոմբոցիտ, ֆագոցիտ
-սոմ		բրոմոսոմ, ռիբոսոմ

Աղյուսակում ներկայացված փոխառյալ բարդություններն ունեն գործառության նեղ ոլորտ. դրանք հիմնականում գիտության տարբեր ճյուղերին վերաբերող տերմիններ են. զուգաձև հոգնակի ստացող փոխառյալ բարդությունների եր-ով հոգնակին նոր երևույթ է։

դ) Բայարմատ բաղադրիչներով բարդություններ.— Այս բարդություններում գերիշխում են հատկապես «որևէ բան անող անձ» նշանակությամբ՝ հիմնականում մասնագիտություն նշող, բառերը. մատենագիրներ, հայագետներ, վիրաբույժներ, գորգագործներ, խմբավարներ, մեքենավարներ, մարզուսերներ, պատմաբաններ և այլն[16]։ Այսպիսի բառերում դերբայական իմաստի գիտակցումն ավելի ուժեղ է, ուստի և հոգնակիի -եր-ով կազմություններ գրեթե չեն նկատվում, եթե հաշվի չառնենք որոշ սխալ կիրառությունները. օրինակ՝ գերեգմանափորեր (ՎՓ, էջ 38), ճանփորեր (ԳՏ, 5, 1972, էջ 6)։

[16] Է. Աղայանի «Արգի հայերենի բացատրական բառարանի» 1-ին հատորի 1—300 էջերից գուրս գրված՝ հոգնակին -եր-ով կազմող 637 բառից 400-ը անձի անվանումներ են։

Հոգնակիի -եր-ով կազմություններ նկատվում են հատկապես «որևէ բան անելու համար նախատեսված սարք, գործիք, մեքենա» նշանակությամբ բառերում։ Դրանցում, երբ երկրորդ բաղադրիչի բայարմատը նույնացվում է միավանկ գոյականի հետ, բարդության հոգնակիում երևան են գալիս և -եր-ով կազմություններ։ Բայարմատ բաղադրիչներով բառերում մեծ թիվ են կազմում փոխանուն ածականները, որոնց հոգնակիի կանոնական ձևը -ներ-ն է։ Բայց քանի որ դրանք հաճախ են հանդես գալիս գոյականաբար, միտում ունեն հոգնակին կազմելու գոյական բաղադրիչով բարդությունների նմանողությամբ։

Ստորև ներկայացնում ենք բայարմատ բաղադրիչներով բարդությունների հոգնակիի զուգաձև կազմությունները։ Համեմատության համար բերում ենք նույն վերջաբաղադրիչով բառեր, որոնց հոգնակին կազմվում է միայն -ներ մասնիկով։

Աղյուսակ № 3

Բաղադրիչը	Զուգաձև հոգնակի ստացող բառեր	Միայն -ներ ստացող բառեր
-թափ	ավտոինքնաթափ, ինքնաթափ, բեռնաթափ, հողաթափ	
-նետ	ականանետ, ջրանետ, նռնականետ	
-շարժ	ինքնաշարժ, շոգեշարժ, տեղաշարժ, երկրաշարժ	
-քարշ	էլեկտրաքարշ, շոգեքարշ, շերմաքարշ, ձիաքարշ	
-չափ	շրաչափ, անձրևաչափ, դծանկյունաչափ, արագաչափ, ռադիոհեռաչափ	հողաչափ, երկրաչափ
-ցույց	հեռուստացույց, աստղացույց	ժամացույց
-թարթ	ակնթարթ	
-ցիր	գնգացիր	
-փոր	գետնափոր	հանքափոր, գերեզմանափոր
-քեր	երկնաքեր	
-կանդ	ջրականդ, ավտոկանգ	

Նշենք, որ զուգաձև հոգնակի ստացող ակնթարթ բառի հոգնակիի կանոնական կազմությունը համարվում է -եր-ը[17], սակայն տարածվածը այդ բառի -ներ-ով հոգնակին է. -եր-ով հոգնակին սակավ է հանդիպում. օրինակ՝ «Որսած ակնթարթեր, որոնց մեջ մեզ ծանոթ սիրելի արվեստագետներն են...» (Ավ., 2, 10, 1972)։ Հողաթափ բառի հոգնակին մինչև XX դ. առաջին տասնամյակները առավելապես կազմվում էր -ներ-ով, ներկայումս տարածված են -եր-ով կազմությունները։ -Ձափ և -ցույց բաղադրիչներով «գործիք, սարք» նշանակությամբ բառերը, որոնց հոգնակիների կանոնական ձևը -ներ-ն է, միտում ունեն հոգնակիի եր-ով կազմությունների։

Այսպիսով, ժամանակակից գրական արևելահայերենի վերջին միավանկ բաղադրիչով բարդությունների հոգնակիներում նկատվում են զուգահեռ ձևեր, որոնց առկայությունը բացատրվում է ձևաիմաստային այլևայլ հանգամանքներով։

17 Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1976, էջ 17։

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Առ.—«Առողջապահություն» (ամսագիր)։
Ավ.—«Ավանդարգ» (լրագիր)։
ԱՏ.—Արսեն Տերաեբյան, Հայ կլասիկներ, Երևան, 1944։
ԲՀ.—«Բանբեր հասարակական» (ամսագիր)։
Բուս.—«Բուսաբանություն», 5—6 (գասագիրք), Երևան, 1976։
Գ—«Գարուն» (ամսագիր)։
ԳՏ—«Գիտություն և տեխնիկա» (ամսագիր)։
ԵԵ—«Երեկոյան Երևան» (լրագիր)։
ԷԱ, ԱՀԲԲ—Էդուարդ Ագայան, Արգի հայերենի բացատրական բառարան, ՀՀ. 1, 2, Երևան, 1976։
ԺՀԼԲԲ—Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972, հ. 3, Երևան, 1974։
ԿԵՆԳ.—«Կենդանաբանություն», 6—7 (գասագիրք), Երևան, 1974։
ՀՍՀ—Հայկական սովետական հանրագիտարան, հ. 1, Երևան, 1974, հ. 2, Երևան, 1976։
ՂԱ—Ղազարոս Աղայան, Ընտիր երկեր, Երևան, 1956։
ՄՆ—Միքայել Նալբանդյան, Երկեր, Երևան, 1953։
ՆՂ—Նար-Դոս, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1955։
ՊՊ—Պերճ Պռոշյան, Կովածադիկ, Թիֆլիս, 1878։
ՍԳ—«Սովետական գրականություն» (ամսագիր)։
ՎՓ—Վրթանես Փափազյան, Երկերի ժողովածու, հ. 5, Երևան, 1959։
Ր—Ռաֆֆի, Երկերի ժողովածու, ՀՀ. 2, 3, Երևան, 1955, հ. 7, 1956։

ДУБЛЕТЫ МНОЖЕСТВЕННОГО ЧИСЛА СЛОЖНЫХ СЛОВ С ПОСЛЕДНИМ ОДНОСЛОЖНЫМ КОМПОНЕНТОМ В СОВРЕМЕННОМ АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

АМАЛИЯ САРКИСЯН

Резюме

В современном армянском языке выбор форманта множественного числа слов с односложным компонентом, по общей закономерности, зависит от характера последнего компонента: при глагольном компоненте слово получает формант **-ներ**, при субстантивном **-եր**. Однако некоторое количество сложных слов может образовать множественное число как с формантом **-ներ**, так и с формантом **-եր**, что обусловлено формальными и семантическими особенностями этих слов.